

## ԱՄՆ–Ի ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆԿԼԻՆ ԴԵ ԼԱՆՈ ՌՈՒԶՎԵԼՏԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1933–1941 ԹԹ.)

Ֆրանկլին Դելանո Ռուզվելտի կառավարման ժամանակաշրջանը արմատականորեն տարբերվում է նախորդներից: Դա պայմանավորված էր ինչպես նրա անձով, այնպես էլ պատմաքաղաքական նոր կացությամբ: Այս փոփոխություններն իրենց ազդեցությունն ունեցան նաև մեկուսացման քաղաքականության վրա: Մեկուսացումը, որը հանրապետական վարչակազմի ներքին և արտաքին քաղաքականությունների շաղկապման առաձգական հանգույցն էր, վերստին իմաստավորվեց և պահպանեց իր կենսունակությունը նաև Ռուզվելտի օրոք՝ ապահովելով Միացյալ Նահանգների սահուն մուտքը 2–րդ աշխարհամարտ: «Նոր կուրսը» 1, էջ 132–133], «Բարի հարևանի քաղաքականությունը» [2, էջ 10], Չեզոքության մասին օրինագծերը, հավաքական անվտանգության ինստիտուտը, չմիջամտման քաղաքականությունը, ռուսական խաղաքարտի ակտիվացումը եվրոպական–հեռավոր արևելյան ճակատներում, գերմանափտալական և ճապոնական ագրեսիաների ձևական սանձազերծումը մեկտեղվում են մեկուսացման քաղաքական համակարգում:

Մեկուսացման քաղաքականությունը պատմաավանդական, գաղափարախոսական մշակութային–քաղաքակրթական, դիվանագիտական, ռազմաքաղաքական, ռազմաֆինանսատնտեսական, օրենսդրական–իրավական տարաբնույթ գործոնների համախումբ է՝ նպատակաուղղված Միացյալ Նահանգների

եսակենտրոն աշխարհի կառուցմանը ժողովրդավարական արժեքների համատեքստում:

Հիշյալ բաղադրատարրերի տարանջատումը կամ ամբողջական զտումը միմյանցից բավականին բարդ է: Նրանցից յուրաքանչյուրը կարող է լինել մի քանի գործոնի միաձուլում, ուստի մեր բաժանումները հարաբերական են: Նրանք ուրվագծում են մեկուսացման երևույթի քաղաքական խճանկարը հավասարապես:

**Պատմաավանդական.** Մեկուսացման տոհմաժառը սերում է Ջորջ Վաշինգտոնի հայտնի կտակից, ըստ որի՝ Միացյալ Նահանգներին վերապահում էր յուրահատուկ առաքելություն աշխարհի և նրանում ապրող ժողովուրդների նկատմամբ: Մեկուսացման քաղաքականության պաշտոնական մեկնարկը համարվում է 1823թ. հռչակված Մոնրոյի հայեցակարգը [3, էջ 12]: Այն խորհրդանշում էր Արևմտյան կիսագնդում ապրող ամերիկյան ժողովուրդների տարանջատումը միապետական Եվրոպայից [4, էջ 26]: Ժամանակի ընթացքում այն դարձավ նույն ամերիկյան պետությունների գաղութացման սրբազան գործիք՝ լինելով արտաքին պաշտպանական և ներքին նվաճողական ուժ: Այն բավականին լայն թափ ստացավ՝ սկսած Թեոդոր Ռուզվելտից, Վուդրո Վիլսոնի օրոք՝ սահմանելով հավաքական անվտանգության երաշխավորման առաջին միջազգային սուբյեկտը՝ Ազգերի լիգան: Ուշագրավ է, որ և՛ Մոնրոյի հայեցակարգի հռչակումը,

և՛ Ազգերի լիգայի ստեղծման ամերիկյան նախաձեռնությունները ուղղորդվել էին բրիտանացիների կողմից: Մեկուսացումը, որը պետք է լիներ Եվրոպայի կողմից ամերիկացիների խնդիրներին չմիջամտելու գործիք, վերածվեց ամերիկյան գերտերության հաստատման ռազմաքաղաքական հրազենի: Ֆրանկլինի օրոք այն արդեն ուներ բարոյաքաղաքական այնպիսի ուժ, որը սևվում էր ոչ միայն պատմաավանդական աղբյուրներից, այլև ձևավորում էր ներքին և արտաքին քաղաքական օրակարգերը: Մպիտակ տան ղեկավարները պահպանում են մեկուսացման քաղաքականության բարի ավանդույթները մինչ այժմ:

**Գաղափարախոսական.** Միացյալ Նահանգների մեկուսացման քաղաքականության գաղափարախոսական գործոնը ժողովրդավարական սկզբունքների հիման վրա միջամերիկյան միասնական համակարգի [5, էջ 8-12] ձևավորումն էր Արևմտյան կիսագնդում:

ԱՄՆ նախագահներից յուրաքանչյուրը Կոնգրեսին հղված տարեկան ուղերձում անպայմանորեն պետք է շեշտադրում կատարեր երկու հիմնական հասկացության վրա՝ «դեմոկրատիայի հաստատում» և «խաղաղության ապահովում»: Ի պաշտպանություն այս հասկացությունների՝ Միացյալ Նահանգները հայտնվում էր հակասական մթնոլորտում, ինչը լավագույնս բնութագրել է Հ. Է. Բարնսը՝ անվանելով իր աշխատությունը «Հավերժական պատերազմ հանուն հավերժական խաղաղության» [6]: Ամերիկյան ինդիվիդուալիզմը, քաղաքացու անվտանգությունը, դեմոկրատական արժեհամակարգի հաստատումը, աշխարհում խաղաղության պահպանումը դառնում են այն բարոյաավանդական մեսիջները, որոնց վրա հիմնվում է մեկուսացման քաղաքականության գաղափարախոսական կառույցը:

1938թ. դեկտեմբերի 9-27-ը Լիմոուս տեղի ունեցած VIII պանամերիկյան համաժողովում [7, էջ 286] ընդունվում է համերաշխության սկզբունքների հռչակագիր. Ամերիկյան հանրապետությունների միջև համերաշխության հաստատում, արտաքին վտանգների համատեղ դիմագրավում [8, էջ 45]: Մոնտեվիդեոյի (1933), Բուենոս Այրեսի (1936) և Լիմի հավաքները հանդիսանում էին Հին աշխարհի ագրեսիան մերժող «աշխարհում փրկության (խաղաղության) օրինակներ» [9, էջ 56 ]: Մոնրոյի հայեցակարգը, որը պետք է հանդիսանար լատինամերիկյան պետությունների պաշտպանիչ կենսաթաղանթը, միաժամանակ վերածվում է պետությունների լռեցման գաղափարախոսական ներքին գեները:

**Մշակութային-քաղաքակրթական.**

ԱՄՆ կողմից Արևմտյան կիսագնդի մշակութային-քաղաքակրթական սահմանազատումը Եվրոպայից սեփական «ես»-ի ձևավորման հրամայական ուներ [10, էջ 15]: Նահանգների մշակութային-քաղաքակրթական էությունը քաղաքական նոր կենսակերպի տարածումն էր Արևմտյան կիսագնդում և ապա՝ դրա արտահանումը այլ աշխարհամասեր [11, էջեր 9-12, 47,62, 71-74, 178-179]: Ամերիկյան ինդիվիդուալիզմի հակադրումը նացիզմին և կոմունիզմին մշակութային ճանապարհով պետք է ընդգծեր ամերիկյան քաղաքակրթության խաղաղապաշտական-գաղափարախոսական բնույթը: Այս քաղաքականության շրջանակներում պետքարտուղարության կազմում ստեղծվեց միջամերիկյան գործերի համակարգողի ինստիտուտը, որի պաշտոնում նշանակվեց Նելսոն Ռոկֆելլերը: Պատերազմի վերջում այս գրասենյակի բյուջեն կազմեց 45 մլն դոլար: Խոշոր գումարներ ներդրվեցին անգլերեն

և իսպաներեն երկլեզու ամսագրերի և այլ գրականության հրատարակման, ռադիոհաղորդումների պատրաստման, գեղարվեստական և վավերագրական ֆիլմերի նկարահանման և այլ ձեռնարկների վրա: Մրա արդյունքը ակներև էր ավելի ուշ՝ 1980-ական թվականներին:

Մշակութային քաղաքականությունը ոչ միայն խթանեց քաղաքական և տնտեսական փոխհարաբերությունները, այլև բազմաթիվ կազմակերպություններ ստեղծվեցին, որոնց առաքելությունը Արևմտյան կիսագնդում միասնական ուժային կենտրոնի ձևավորումն էր՝ Նահանգների գլխավորությամբ: Արևմտյան կիսագնդում «մշակութային ինտերվենցիան» մեկուսացման քաղաքականության ներքին կոմպրոմիսի արդյունք էր 2-րդ աշխարհամարտին ընդառաջ:

**Դիվանագիտական.** Մեկուսացման քաղաքականությունը միջազգային հարաբերությունների դաշտում շարունակում էր զարգանալ հիմնական չորս ճանապարհով՝ լատինաամերիկյան, եվրոպական, ռուսական և հեռավորարևելյան: Լատինական Ամերիկայում մեծ մահակի քաղաքականությունը և դոլարի դիվանագիտությունը փոխարինվեցին «բարի հարևանի»<sup>[1]</sup> քաղաքականությամբ, որը բաղկացած էր նաև գաղափարախոսական և ֆինանսատնտեսական գործունեության\* [2]: Նոր նախագահը հայտարարեց, որ «լատինաամերիկյան հասարակական կարծիքն արդեն իսկ թշնամական է տրամադրված դեպի մեզ» [12, էջ 638]: Միաժամանակ, Միացյալ Նահանգները անհանգստացած էր Լատինական Ամերիկայում ֆաշիստական Գերմանիայի ազդեցության հզորացումից, որը թելադրում էր Արևմտյան կիսագնդում դիվանագիտական փոխհարաբերությունների այլ ինստիտուտի ձևավորում՝ զերծ մնալով ռազմաքաղաքական ճնշումներից:

«Բարի հարևանի» քաղաքականության նկատմամբ ամերիկյան պատմագրության մեջ կա ձևավորված երկու հիմնական մոտեցում: Մի դեպքում՝ այն դիտարկվում է որպես Ֆ.Դ. Ռուզվելտի կողմից կատարված նորամուծություն ԱՄՆ լատինաամերիկյան քաղաքականության մեջ, իսկ մյուս դեպքում՝ նախորդած վարչակարգերի բիրտ քաղաքականության մեղմացում և ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակում նոր գործիքների յուրացում և հրաժարում ռազմական ճանապարհից, որն ավելի թանկ էր նստում և քիչ արդյունավետ էր [13, էջ 5-6]:

Իրականում, ԱՄՆ-ն, հավատարիմ մնալով մեկուսացման քաղաքականությանը և «Մոնրոյի հայեցկարգի» բազմերանգությանը, շեշտադրումը կատարեց առավելապես քաղաքական և տնտեսական գործիքների վրա՝ փորձելով շղարշել նախորդների սխալները «նոր կուրսի» համատեքստում:

Եվրոպական դաշտում Ազգերի լիգան շարունակում էր հանդիսանալ աշխարհում խաղաղության պահպանման հավաքական անվտանգության միջազգային սուբյեկտը: Գերմանիայի և Ճապոնիայի ինքնամեկուսացումը այս կառույցից լուրջ մարտահրավեր էր եվրոպայում և Հեռավոր Արևելքում խաղաղության պահպանմանը\* [3]: Գերմանիայի կողմից Լիգան լքելուց մեկ ամիս չանցած՝ 1933 թ. նոյեմբերի 16-ին, ԱՄՆ-ն վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները ԽՍՀՄ-ի հետ: Ուժերի հավասարակշռման եվրոպական օրինաչափությունը նոր բնույթ ստացավ, երբ 1934թ. Խորհրդային Միությունն ընդգրկվեց Ազգերի լիգայի կազմում: ԽՍՀՄ-ի դիվանագիտական մեկուսացման վերանայումը եվրոպական ճակատում սահմանում էր ուժերի հարաբերակցության

նոր ձևաչափ, որտեղ ԽՍՀՄ-ը պաշտոնապես ճանաչվեց հակամարտող կողմ Նահանգների մեկուսացման խաղում: Ավելի ուշ, ԽՍՀՄ-ը, կռահելով իրեն վերապահված դերի նշանակությունը, փորձեց խուսափել (Մոլոտով-Ռիբենտրոպ պակտ), սակայն գերմանական ագրեսիան սահմաններ չէր ճանաչում (Հայրենական մեծ պատերազմի բեռը):

**Ռազմաքաղաքական.** 1939 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ ամերիկյան պետությունների արտգործնախարարների առաջին խորհրդատվական նիստը, երկրորդ նիստը տեղի ունեցավ 1940թ. հուլիսին: Հավաքների արդյունքը չեզոքության, անվտանգության ապահովման, փոխադարձ օգնության հռչակագրերն էին և արձանագրությունների ստորագրումը, ինչպես նաև՝ Լատինական Ամերիկայում եվրոպական գաղութների ժամանակավոր կառավարման ստանձնումը: 1940թ. սեպտեմբերի 27-ին Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի մասնակցությամբ ձևավորվեց «Չարիքի առանցքը», որին կարճ ժամանակահատվածում միացան բազմաթիվ պետություններ: Հակահիտլերյան ռազմաքաղաքական կռաւիցիան իր հիմնական կազմով ձևավորվեց ավելի ուշ: 1940թ. հուլիսի 2-ին Ռուզվելտը ստորագրեց Ազգային պաշտպանության արձանագրությունը [14, էջ 140]: Երկրորդ աշխարհամարտի սկզբում ԱՄՆ-ն և ԽՍՀՄ-ը հայտարարեցին իրենց չեզոքության մասին: Անգլիան և Ֆրանսիան տարված էին «տարօրինակ պատերազմով» և գրեթե չէին մասնակցում ռազմական գործողություններին Արևմտյան ճակատում: Անգլիան և Ֆրանսիան սպասում էին, թե ինչպես է Գերմանիան հարձակվելու ԽՍՀՄ-ի վրա: Վերջինս, հիմնվելով Մոլոտով-Ռիբենտրոպ պակտի վրա, սպասում էր նույն վար-

քազիծը նրանց հանդեպ: Ամենաշահավետ վիճակում գտնվում էր Միացյալ Նահանգները, որի անձոնմխելիության միջը հոդս ցնդեց Պերլ Հարբորի ողբերգական իրադարձություններից հետո, 1941թ. դեկտեմբերի 7-ին [15, էջ 451-452]: Ճապոնական հարձակումը ապահովեց ԱՄՆ-ի պաշտոնական մուտքը 2-րդ աշխարհամարտ, որը, ամերիկյան պատմաբանների կարծիքով, դադարեցրեց մեկուսացման, չմիջամտման կամ չեզոքության քաղաքականությունը: Մինչդեռ մեկուսացումը, իբրև ռազմաքաղաքական դոկտրին, առաջնահերթորեն նպաստեց եվրոպական կոնֆլիկտների սրմանը, որն իր կենսական սահմաններից դուրս էր և սկսված պատերազմում պետք է նրան տար այն կարգավիճակը, որի մասին ժամանակին երագում էր Վիլսոնը:

**Ռազմաֆինանսատնտեսական.** Ռուզվելտը Միացյալ Նահանգների ղեկավարումը ստանձնեց ֆինանսատնտեսական լուրջ ցայտնոտի մեջ: Նախագահ Ռուզվելտի 100 օրը [16, էջ 197] նպատակաուղղված էր երկիրը արագորեն դուրս բերել «Մեծ ճգնաժամից» [17, էջ 6 ]: Նախագահի «Նոր կուրսը» պետք է հանդիսանար համալիր բարեփոխումների ծրագիր և երկիրը դուրս բերեր ստեղծված իրավիճակից: Բարի հարևանի քաղաքականությունը, Ռուսաստանի ճանաչումը, Չմիջամտման քաղաքականությունը և հարաբերական չեզոքությունը եվրոպական կոնֆլիկտների նկատմամբ ունեին մեկ գերխնդիր՝ վերականգնել ամերիկյան ռազմատնտեսական արդյունաբերությունն ի հաշիվ օտարերկրյա պատվերների և ներդրումների:

1938թ. հունիսին նախագահը հայտարարեց. «Ոչ մի երկիր ամբողջությամբ չկարողացավ լուծել գործազրկության խնդիրը ճգնաժամի ժամանակ: Մինչ

այժմ միակ արդարացված մեթոդը, որը կապահովի գրեթե 100%-անոց վերականգնում, անցումն է ռազմական արդյունաբերությանը» [18, 625–626 ]: 1938թ. ռազմական գերատեսչությունը ներկայացրեց 4 միլիոնանոց բանակի պահպանման նախահաշիվ, որը նախատեսում էր 349 մլն դոլար ծախս [19, էջ 49]: Միացյալ Նահանգների ռազմական տնտեսության անցումը որակվում է նախապատրաստում պատերազմի, որը շղարշվում է «մեկուսացման քաղաքականությամբ» [20, էջ 265 ]: Գերմանիայից, Իտալիայից և Ճապոնիայից 1929–1936թթ. Լատինական Ամերիկա ապրանքների ներմուծումը կազմել էր 17–28%, իսկ ԱՄՆ–ի ապրանքաշրջանառության ցուցանիշը անկում էր ապրել 70 %-ով [21 ]:

Պատերազմի նախօրյակին Միացյալ Նահանգների ներդրումը գերմանական տնտեսության մեջ միլիարդների էր հասնում: 1938թ., ԱՄՆ–ի առևտրի նախարարության տվյալներով, միայն ամերիկյան երկարատև փոխատվությունները կազմում էին 697 մլն դոլար, իսկ մասնավոր ներդրումները՝ 353 մլն. դոլար [22, էջ 322, 162]: Միացյալ Նահանգները շարունակում էր գերշահույթներ ստանալ արտերկրում կատարած ներդրումներից (Լատինական Ամերիկա, Կանադա, Եվրոպա, Հեռավոր Արևելք, Աֆրիկա):

Ռազմավարական մեծ նշանակություն ուներ Կանադան: 1940թ. այստեղից ստացված տարեկան շահույթը՝ 127 մլն. դոլար, կազմում էր լատինամերիկյան երկրներից ստացված ընդհանուր շահույթի 82%-ը: 1940–1941թթ. Լատինական Ամերիկայից ստացված եկամուտը կազմում էր 333.2 մլն դոլար, Կանադայից՝ 248.2, Անգլիայից՝ 62, Չինաստանից՝ 6.1, Հնդկաստանից՝ 5.9, Հարավային Աֆրիկայից՝ 17.2 մլն դոլար [23, էջ 210, 212 ]: Միացյալ Նահանգների ստացած

շահույթը Արևմտյան կիսագնդից արդարացնում է այն բոլոր ներդրումները, որոնք կատարվում էին միասնական համակարգի ձևավորման նպատակով:

**Օրենսդրական-իրավական.** Չեզոքության մասին օրինագծերի ընդունումը [24, էջ 223–226], որն ընդգրկում է 1935–1941թթ. ընկած ժամանակահատվածը, բյուրեղացնում է մեկուսացման հետևորդների և հակառակորդների՝ միջազգայնականների քաղաքական պայքարը ԱՄՆ Կոնգրեսում: 1930–ական թվականներին Եվրոպան կրկին բռնել էր համաշխարհային նոր պատերազմի կուրսը [25, էջ 28], որն, ըստ ամերիկացիների, ԱՄՆ–ին կարող էր ներքաշել նոր պատերազմի մեջ, ինչը լի էր անկանխատեսելի հետևանքներով և նոր ճգնաժամերով: Ուստի Մեկուսացման քաղաքականության ձևակերպումը օրենսդրական հարթության վրա հասարակական պահանջ էր, սակայն Սպիտակ տան ղեկավարությունը չէր պատրաստվում հրաժարվել պատերազմի գաղափարից կամ որևէ կերպ սահմանափակել իր գործողությունները միջազգային դաշտում:

Օգոստոսի 21–ին Մենատը հավանության արժանացրեց Չեզոքության մասին օրենքը [26, էջ 13], օգոստոսի 31–ին այն ընդունվեց Կոնգրեսի կողմից [27, էջ 103]: Չեզոքության օրենքը որպես «անհրաժեշտ ընտրություն» [28, էջ 272–273] Մեկուսացման քաղաքականության իրական ազդեցիկ շղարշ էր, որն իբրև թե պետք է ապահովեր չմիջամտման քաղաքականությունը եվրոպական աշխարհի կոնֆլիկտներին, չօժանդակեր պատերազմող կողմերին կամ ազդետորին ու զոհին: Այն արգելում էր ռազմամթերքի և ստրատեգիական հումքի, ապրանքների արտահանումը այնպիսի երկրներ, որոնք կարող էին տարանցիկ ուղի հանդիսանալ պատերազմող երկրների համար:

Չեզոքության օրենքները յուրաքանչյուր տարի դիմափոխվում էին՝ նպաստելով կոնֆլիկտների հասունացմանը:

1936թ. փետրվարին Կոնգրեսը կատարեց փոփոխություն. ըստ այդմ՝ Լատինական Ամերիկայի երկրները դուրս էին գալիս չեզոքության օրենքի դաշտից, եթե պատերազմելու էին ոչ ամերիկյան պետությունների հետ:

1937 թվականին Իսպանիան ենթարկվեց ֆաշիստ հարևանների ինտերվենցիաներին և ներքաշվեց քաղաքացիական պատերազմի մեջ: ԱՄՆ Կոնգրեսը որոշում ընդունեց զենք չվաճառել այն պետություններին, որոնք գտնվում են քաղաքացիական պատերազմի մեջ, այսինքն՝ Իսպանիային, սակայն ամերիկացի ռազմարդյունաբերողները վաճառում էին զենքը իսպանացի ապստամբներին (Պորտուգալիայի միջոցով), ինչպես նաև գերմանացի և իտալացի ագրեսորներին [29, էջ 8]: Օրենքում ավելացվեց նաև «քեշ ենդ քերի»՝ «վճարիր և փոխադրիր», կետը, որը նախատեսում էր ստրատեգիական հումքի, բայց ոչ զենքի, վաճառք ԱՄՆ-ի տարածքում: Անկախ պետության կարգավիճակից (ագրեսոր թե պաշտպանվող) այն կարող էր ԱՄՆ-ում ձեռք բերել ռազմաստրատեգիական նշանակություն ունեցող հումք, եթե վճարեր կանխիկ և տեղափոխումն իրականացներ սեփական տրանսպորտային միջոցներով:

1939 թ. նոյեմբերի 4-ին Կոնգրեսն ընդունեց որոշում, ըստ որի՝ թույլատրվում էր զենք վաճառել Գերմանիայի հետ պատերազմող երկրներին: 1941թ. մարտի 11-ին ԱՄՆ Կոնգրեսը ընդունեց «Միացյալ Նահանգների պաշտպանության մասին օրենքը»՝ «Լենդ-լիզը»\* [4], որը բազում սուր բանավեճերի տեղիք տվեց [30, էջ 48]:

Իսկ 1941թ. Պերլ Հարբորի դեպքերից հետո Չեզոքության մասին օրենքը վե-

րացվեց, սակայն դա չէր նշանակում, որ ԱՄՆ-ն հրաժարվեց մեկուսացման քաղաքականությունից:

Մեկուսացման քաղաքականությունը Ֆ.Դ. Ռուզվելտի նախագահության օրոք թոթափեց և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքական օրակարգերում ծառայած հիմնական երկու խնդիրների խումբ. ճգնաժամի հաղթահարում և ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդում՝ օրենսդրաիրավական դաշտում ամենօրյա «հեղափոխությունների» և դիվանագիտական նուրբ խուսանավումների ճանապարհով: ԱՄՆ Կոնգրեսը Չեզոքության համալիր օրենքների ընդունման և շարունակական լրացումների ճանապարհով պտտեց Եվրոպայում ուժերի հավասարակշռման քաղաքական անիվն ըստ իր հայեցողության: Չեզոքությունը, որն ի սկզբանե պետք է հանդիսանար ԱՄՆ կողմից չմիջամտման քաղաքականության և Արևմտյան կիսագնդում խաղաղության և անվտանգության ապահովման գրավական, վերածվեց ԱՄՆ ռազմաքաղաքական ագրեսիվ դիվանագիտության նոր ալիքի:

Զինման մրցավազքի արդյունքում ԱՄՆ ռազմական արդյունաբերողները ստացան մեծ թվով պատվերներ, որոնք պետությանը հսկայական եկամուտներ բերեցին ողջ պատերազմի ընթացքում: Անկախ որոշ աշխարհաքաղաքական հաշվարկների ձախողումից, որը չէր նախատեսում Միացյալ Նահանգների անմիջական շուտափույթ ներքաշումը համաշխարհային պատերազմ (1941թ. դեկտեմբերից), ամերիկյան տնտեսությունը նոր զարթոնք ապրեց ի հաշիվ ռազմարդյունաբերական սինդիկատների:

2-րդ աշխարհամարտով Մեկուսացման քաղաքականությունը կամ Մոնրոյի հայեցակարգը չդադարեցին գոյություն

ունենալ: Մարշալի պլանը, Տրումենի, Բուշի ռազմաքաղաքական դոկտրինները, ինչպիսի անվանում էլ կրեն և ինչպես էլ ձևակերպվեն, հանդիսանում են Միացյալ Նահանգների մեկուսացման ավանդական քաղաքականության գենետիկական իրավահաջորդները, որոնք կոչված են ծառայելու Միացյալ Նահանգների ռազմաքաղաքական հզորության պահպանմանն աշխարհում: Մեկուսացման քաղաքականության պատմաավանդական, գաղափարախոսական, մշակութային-քաղաքակրթական, դիվա-

նագիտական, ռազմաքաղաքական, ռազմաֆինանսատնտեսական, օրենսդրաիրավական տարաբնույթ գործոնները տարասեռ են և ենթակա են քաղաքական նոր զարգացումների:

Մեկուսացումը պահպանում է իր արդիականությունը մինչ այժմ, այն շարունակում է մնալ Սպիտակ տան առաջնորդների ավանդական զինատեսակը Միացյալ Նահանգների ռազմական դիվանագիտության դաշտում:

*Հոդվածի ներկայացման փարեթիվը՝ 22.01.2013 թ.*

1. Լատինամերիկյան երկրների ներքին քաղաքական անկախություն և չմիջամտելու քաղաքականություն, պետությունների իրավահավասարության սկզբունքի որդեգրում, առևտրատնտեսական պայմանագրերի կնքում փոխադարձ համաձայնությամբ: Այս անկյունաքարերի հիմքի վրա պետք է կանգնեցվեր «բարի հարևանի» քաղաքական վերնաշենքը:
2. Ֆինանսատնտեսական. 1929–1936 թթ. Գերմանիայից, Իտալիայից և Ճապոնիայից ապրանքների ներմուծումը կազմել էր 17–28 %, ի համեմատություն նշենք, որ 1929–1932 թթ. ամերիկյան ապրանքաշրջանառությունը նվազել էր 70 %-ով: Գաղափարախոսական. ֆաշիզմը գնալով ավելի էր արմատավորվում պանամերիկյան երկրներում, որը ոչ միայն քաղաքականության մեղմացման, այլև գաղափարախոսական ռեֆորմ էր պահանջում:
3. Ազգերի լիզայի կազմից Գերմանիան դուրս եկավ 1933թ. հոկտեմբերի 20–ին, Ճապոնիան՝ 1933 թ. մարտի 27–ին, Իտալիան՝ 1937 թ. դեկտեմբերի 11–ին:
4. Լենդ-լիզի ծրագրով մատակարարումը կազմեց 50.1 միլիարդ դոլարի օգնություն (համեմատության համար նշենք, որ 2008 թ. գներով այն կկազմեր 610 միլիարդ դոլար): 31.4 միլիարդը բաժին ընկավ Մեծ Բրիտանիային, 11.3 մլդ.՝ ԽՍՀՄ–ին, 3.2 մլդ.՝ Ֆրանսիային, 1.6 մլդ.՝ Չինաստանին: Լենդ–լիզի հակադարձ արձագանքը (դաշնակիցների մատակարարումը ԱՄՆ–ը) կազմեց 7.8 մլդ դոլար, որից 6.8 մլդ դոլարը եկավ Բրիտանիայից, մնացածը այլ երկրներից:

## ՊԵՐՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бернс Д.** М.Франклин Рузвельт. Человек и политик // М., 2004: «Լենդ–լիզի ծրագիրը դա «Նորկուրսի» արտաքին քաղաքականության մեջ նույն Ատանտն է: Այն կթաղի յուրաքանչյուր չորրորդ ամերիկացի երիտասարդին»:
2. **Георгиев А.В.** Панамериканизм и панамериканский союз // М.: 1946.
3. История США, 1918–1945, том III, М., 1985.

4. **Киссинджер Г.** Дипломатия // М.: 1997. «Մոնրոյի հայեցակարգի ներքո Ամերիկյան ընդունակ էր հետապնդելու քաղաքական նպատակներ, որոնք ըստ էության չէին տարբերվում եվրոպական որևէ տիրակալի երազանքներից, այն է՝ ընդլայնել առևտրի և ազդեցության գոտիները, միավորել տարածքներ և վերածվել գերտերության՝ առանց ուժային քաղաքականության կիրառման»:
5. **Наджафов Д. Г.** Нейтралитет США, 1935–1941, М.: 1991. «1935 թ. մարտի 16–ին Ադոլֆ Հիտլերը Գերմանիայում հայտարարեց համընդհանուր զինվորական ենթարկվածություն՝ նպատակ ունենալով ստեղծել կես միլիոնանոց բանակ»:
6. **Хантингтон С.** Кто мы? М., 2008. «Ամերիկացիների ազգային ինքնության գիտակցումը ընթացել է ԱՄՆ–ի ողջ պատմության ընթացքում»:
7. **Яковлев Н. Н.** Новейшая история // М.: 1961.
8. **Яковлев Н. Н.** Новейшая история // М.: 1961.
9. **S. Adler,** The Isolationist Impulse, London and New York, 1957:
10. **H. E. Barnes,** Perpetual War for Perpetual Peace, 1953:
11. **Lewis C.** The United States and foreign Investment Problems. Washington, 1948, p. 322, տես նաև Громыко А .А. Внешняя экспансия капитала // М.: 1982.
12. **Charles A. Beard,** American Foreign Policy in the making, 1932–1940, Yale university press, Archon books, 1968:
13. **H. S. Commager,** Documents of American history, New York, 1963, vol. II, 451–452
14. **R. Dallek., Franklin D. Roosevelt and American foreign policy, 1932–1945,** New York, Oxford, 1995:
15. **David F. Schmitz,** The triumph Internationalism. Franklin Delano Roosevelt and World Crisis, 1933–1941, Dulles, Virginia, 2007:
16. **Edward H. Kavinoky and Julian Park,** My friends By Franklin Delano Roosevelt, New York, 1951, (New Deal Speech Before the Democratic National Convention, July 2, 1932):
17. **Franklin D. Roosevelt.** His Personal Letters, 1928–1945: vol. 1, 2 (Ed. By E. Roosevelt, J.P. Lash N.Y., 1950, vol 1,):
18. **C. Green,** H. Thompson, P. Roots, The Ordnance Department: Planning Munitions for War, Washington, 1955, «Նյուֆասկան ապահովման կառավարման համար պատերազմը սկսվեց 1938 թ.»:
19. **John P. Sanderson.,** Republican Landmarks. The Views and Opinions of American Statesmen on Foreign Immigration..Philadelphia, 1856.«Անգլերեն լեզուն պետք է դառնար համամարդկային», «Ընդհանուր մտածողության ձև»:
20. **Justus D. Doenecke,** John E. Wilz, Virginia,From isolation to War 1931–1941, Library of Congress, Harlan Davidson, 2003:
21. **H.J. Lambertson,** American vision of Europe, Cambrige, 1994:
22. **A. Rochest,** Your Dollarunder Roosevelt, New York, 1933, «1933 թ. սննկացել էին առնվազն 5096 բանկ՝ գործող 18 հազար բանկերից գրեթե մեկ երրորդը»:
23. **H. Smith,** Economic History of the United States, New York, 1955:
24. **Taylor F. J.,** TheUnited States and the Spanish Civil War, 1936–1939. N.Y., 1956, «1936–1939 թթ իսպանական իրադարձությունները մեծ աղմուկ բարձրացրեցին,– ինչպես գրում է Ֆ. Թեյլորը,– երկու տասնամյակի ընթացքում սա առաջին լուրջ ճգնաժամն էր, որտեղ ամերիկացիները խորությամբ ներքաշվեցին»:
25. International Transactions of the United States During the War, 1940–1945: տես նաև Громыко-А.А. Внешняя экспансия капитала // М.: 1982.
26. FRUS, DocumentsonGermanForeignPolicy,1918–1945, Պերոյում գերմանացի բանագնացը հեռագրում է, որ «բանաձևերի հիմնական մասը ընդունված են ընդդեմ մեզ...»:
27. Congressional Record. Vol. 79:
28. Was the United States a “Good Neighbor” Toward Latin America in the 1930s:
29. <http://www.mrsleeshistoryplace.com/honors/Latin%20America/Good%20Neighbor%20Policy%20Source%201.htm> Was the United States a “Good Neighbor” toward Latin America in the 1930 s? JURGEN SCHEUNEMANN, YALE UNIVERSITY
30. [www.memory.loc.gov](http://www.memory.loc.gov), Journal of the House Representatives of the United States, Volume 17, Tuesday, December 2, 1823.



ПОЛИТИКА ИЗОЛЯЦИОНИЗМА США ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ ПРЕЗИДЕНТА  
ФРАНКЛИНА Д. РУЗВЕЛЬТА (1933–1941)

**САВГУЛЯН АРЕГ**

*Советник министра труда и  
социальных вопросов РА*

В статье описываются исторические, идеологические, культурно–цивилизационные, дипломатические, военно–политические, военно–финансовые, экономические и законо–правовые аспекты и факторы политики изоляционизма во время правления президента США Франклина Д. Рузвельта (1933–1941гг). Изоляционизм как военно–политический и дипломатический инструмент продолжает использоваться в военно–дипломатическом контексте “доброе соседство”, “нейтралитета” и “невмешательства”. Доктрина изоляционизма пытается найти свое достойное место в милитарном мире. Она заняла место секундантa в идеологической борьбе добра и зла.

*Дата представления статьи: 22.01.2013 г.*

USA ISOLATIONISM POLICY DURING THE REIGN OF PRESIDENT FRANKLIN D.  
ROOSEVELT(1933–1941)

**AREG SAVGULYAN**

*Councillor to the Minister of Labour and Social affairs of RA*

The article describes historical, ideological, cultural–civilizational, diplomatic, military–political, as well as military financial–economic and legislative–legal factors of neutralist policy during the reign of U.S. President Franklin D. Roosevelt (1933–1941). As a military–political and diplomatic tool of the United States, neutralism is continued to be used in the context of “good neighbor”, “neutralist” and “non–interference” policies. The doctrine of neutralism is trying to find its new place in the militarized world as a disinterested witness of the contest between good and evil ideologies.

*Article submission date: 22.01.2013*